

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/13

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ (այսուհետ նաև՝ կոոպերատիվ) նախագահը տեղեկացնում է, որ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն կողմից 26.03.2018թ. կազմված N53/2018/Փ ծանուցագրով իրազեկվել է, որ կոոպերատիվի կանոնադրական կապիտալում 33,33% փայաբաժին ունեցող Մկրտիչ Գուրգենի Պողոսյանը միաժամանակ հանդիսանում է «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի հիմնադիր 100% բաժնեմասով (ՀՎՀՀ 09216078):

Մկրտիչ Պողոսյանը 2018թ. հունվարի 8-ին կոոպերատիվի ընդհանուր ժողովին իր փայաբաժնից հրաժարվելու և կոոպերատիվի կազմից դուրս գալու դիմում է ներկայացրել, որն ընդունվել է հիմնադիրների կողմից և կազմվել համապատասխան արձանագրություն: Սակայն նախքան պետական ռեգիստրի տարածքային բաժնում կոոպերատիվի կանոնադրական կապիտալի փայատերերի փոփոխություն կատարելը, Մկրտիչ Պողոսյանն առանց տեղեկացնելու, 2018թ. փետրվար ամսին գրանցել է «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ն: Այժմ «ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ի կանոնադրության փոփոխության գործընթացը պետական ռեգիստրի տարածքային բաժնում արդեն ավարտված է և Մկրտիչ Պողոսյանն այլևս կոոպերատիվի անդամ չէ:

«ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ն 2015թ. աշխատում է շրջանառության հարկով: Նույնիսկ այս հարկատեսակով աշխատելով կոոպերատիվը հազիվ գոյության պահպանման հարց է կարողանում լուծել, տարեկան ապահովելով 4-5 աշխատատեղ, նաև մեծ դժվարությամբ է կարողանում մարել հարկային պարտավորությունները (այս պահին հարկային պարտավորությունները կազմում են շուրջ 500 հազ. դրամ): Տարածաշրջանի շուկայում ավելի մեծ դերակատարների առկայության պայմաններում տարեց-տարի նվազում են պատվերների քանակը, միայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կոոպերատիվի շրջանառությունը նվազել է 13 %-ով, կամ շուրջ 707 հազ. դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է թույլ տալ 2018թ. մնացած ամիսներն էլ աշխատի շրջանառության հարկով: 2018թ. արդեն շրջհարկով դուրս են գրվել 15 հաշիվապարանքագրեր (4,7 մլն դրամ ընդհանուր շրջանառությամբ), իսկ գործընկերների հետ կապված պայմանագրերում արտադրանքի գները հաշվարկված են հաշվի առնելով շրջհարկի տոկոսադրույքները: ԱԱՀ-ի դաշտ անցնելով կոոպերատիվը ստիպված կլինի դադարեցնել գործունեությունը և լուծարվել:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 01.09.1994թ.:

«ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը և համարվել շրջանառության հարկ վճարող: Այնուհետև, ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.03.2018թ. N53/2018/Փ ծանուցագրով իրազեկվել է, որ կոոպերատիվի կանոնադրական կապիտալում 33,33% փայաբաժին ունեցող Մկրտիչ Գուրգենի Պողոսյանը միաժամանակ հանդիսանում է «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի հիմնադիր 100% բաժնեմասով (ՀՎՀՀ 09216078):

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի կիրառության իմաստով՝ կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, բացառությամբ այն դեպքերի, երբ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել:

Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը:

Քննարկվող դեպքում «ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ի կանոնադրական կապիտալում 33,33% փայաբաժին ունեցող Մկրտիչ Գուրգենի Պողոսյանը միաժամանակ հանդիսացել է «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի հիմնադիրը՝ 100% բաժնեմասով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ն չի բավարարում շրջանառության հարկ վճարող համարվելու համար Օրենսգրքի վերը նշված դրույթներով նախատեսված պահանջներին:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» ԱԿ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ